

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Վայոց ձորի 12.03.2013թ. մարզխորհրդի N 1 նիստի

ք. Եղեգնաձոր

12.03.2013թ., Ժամը՝ 11.00-ին

1. <<2013թ հունվար, փետրվար ամիսների համայնքային բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին>>

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության պետ Ռ. Հայրապետյան/

2. <<Գարնան գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքը մարզի համայնքներում>>

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բազմաբնույթ վարչության պետ Բ. Մկրտչյան/

3. Հաղորդում <<ՀՀ կառավարության 2013թ փետրվարի N 130 որոշմամբ 4-րդ հրատապ ծրագրով մարզում նախատեսված աշխատանքների մասին>>

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Հովսեփյան/

### **Հայտարարություններ**

1. <<ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության կողմից ընդունված իրավական ակտերի մասին>>

/Զեկուցող՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ն. Մաղաքյան/

2. <<ՀՀ կառավարության 2013թ. փետրվարի 14-ի N 134-Ն որոշման մասին>>

/Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչության պետ Ն. Սիմոնյան/

Մարզխորհրդի նիստին հրավիրված են՝ համայնքների ղեկավարներ, աշխատակազմերի քարտուղարներ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության տարածքային ծառայությունների տնօրեններ, մասնագետներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ՋԼՄ ներկայացուցիչներ:

- Մարզխորհրդի նիստին հրավիրված են մասնակցելու՝ համայնքների ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ, մարզի բաժնետիրական ընկերությունների նախագահներ, ինչպես նաև մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,**

**ԴԻՄՈՒՄՆԵՐԻ և ԲՈՂՈՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**ՏԻԿԻՆ Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 15.07.2009թ. N 03/17/3885-9 հանձնարարականի կից ներկայացնում ենք 2012թ. դեկտեմբեր ամսին ՀՀ Վայոց Ձորի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ:

**Հարգանքներով՝**

**Է. ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տերտերյան**

Ի պատասխան Ձեր 15.07.2009թ. N 03/17/3885-9 հանձնարարականի կից ներկայացնում ենք 2012թ. դեկտեմբեր ամսին ՀՀ Վայոց Ձորի մարզպետի մոտ կայացած քաղաքացիների ընդունելության կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ:

**Հարգանքներով՝**

**Է. ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

**Մեծարգո պարոն վարչապետ**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 24-ին „ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկին տարածք /գույք/ ամրացնելու և ՀՀ կառավարության 2012թվականի մարտի 15-ի

N321-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,, N 704-Ն 3-րդ կետի „ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկին հանձնված՝ Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 5 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 251.2քմ և 2-րդ հարկի՝ 175.1քմ մակերեսով տարածքը հետ է վերցվել և 2012թ օգոստոսի 21-ին հանձնվել է „ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկին: ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ հանձնվող գույքի կազմում է եղել նաև „ՀՀ Ազգային արխիվ,, ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի մարզային մասնաճյուղը, որը մեզ ամրացված վարչական շենքի առաջին հարկում զբաղեցնում էր 81.4քմ տարածք: Արխիվի մասնաճյուղը 2007թ հունիսի 12-ին ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանումից ստացել է N 23751192 գույքի անհատույց և անժամկետ օգտագործման սեփականության իրավունքի վկայականը,ինչի մասին մենք տեղեկացել ենք վերջերս, ի դեպ այդ տարածքը ներառված է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 1999թ. հատկացված սեփականության իրավունքի N071660 վկայականում:

Հարցի կարգավորման նպատակով, դեռևս 2011թ. դեկտեմբերի 12-ին Ձեզ ուղղված մեր N01/09.12/5598-11 գրությամբ առաջարկվել է „ՀՀ ազգային արխիվ,, ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի մարզային մասնաճյուղը տեղափոխել „ Եղեգնաձորի մշակույթի տուն,, ՊՈԱԿ-ի առաջին հարկ վերջինիս հատկացնելով համապատասխան տարածք:

Արխիվի մասնաճյուղին նոր տարածք տեղափոխելու վերաբերյալ Ձեր 02.02.2012թ-ի N 02/24.12/1230-12 հանձնարարականի՝ ՀՀ ֆինանսների նախարարը տվել էր բացասական պատասխան, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

Ելնելով վորոգրյալից, խնդրում ենք մեկ անգամ ևս անդրադառնալ Եղեգնաձոր քաղաքի Շահումյան 5 շենքից <<<< ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի տեղափոխման հարցին, կամ էլ համապատասխան փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2012թ.մայիսի24-ի N 724-Ն որոշման 3-րդ կետում:

**Հարգանքներով՝**

**Է. ՂԱԶԱՐՅԱՆ**